ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ________________ /________________/

«____» ____________ 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

III դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Հովհաննիսյան Մելանյա

դասղեկի ազգանունը, անունը,

«2023-2024» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024 ուստարում III$^{Ա}$ դասարանում սովորում են 29 աշակերտ՝ 16 աղջիկ,13 տղա: Սովորողներն աչքի են ընկնում կազմակերպվածությամբ և միմյանց նկատմաբ հարգալից , հոգատար վերաբերմունքով : Դասարանի աշակերտները պարտաճանաչ են և կարգապահ:Աշակերտների մեծամասնությունն ունակ է բարձր առաջադիմություն ցուցաբերել ուսումնական գործընթացում:Հետ մնացող աշակերտների հետ տարվում է անհատական աշխատանք:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ Հետևողական աշխատանք տանել ուսման առաջադիմության բարձրացման նպատակով:

բ/ Նպաստել երեխաների մտավոր ,ֆիզիկական և գեղագիտական զարգացմանն ու դաստիարակությանը:

գ//Հաճախակի հանդիպումներ կազմակերպել ծնողների հետ՝ քննարկելով երեխաների զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված հարցեր:

դ/ Տարաբնույթ աշխատանքների միջոցով նպաստել աշակերտների բազմակողմանի զարգացմանը:

ե/ Վերհիշել դպրոցում վարվեցողության կանոնները,աշակերտների իրավունքներն ու պարտականությունները:

3. Հայեցի դաստիարակություն

Գիտակցի, որ ինքը ազգային արժեքների, ավանդույթների, մշակույթի կրողն է: Սիրի և գնահատի հայրենիքը:

3.1 - Հոգևոր դաստիարակություն

Ձևավորել քրիստոնյա անձ՝ հոգևոր արժեքների կրող:Անցկացնել զրույցներ ազգային ծեսերի,քրիստոնեական հավատի մասին:

3.2 - Գեղագիտական դաստիարակություն

Հաճախակի կազմակերպել այցելություն թանգարաններ, կազմակերպել տարիքային կինոդիտումներ և ներկայացումների դիտումներ, դրանք քննարկել և վերլուծել:

3.3 - Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Անցկացնել զրույցներ հայրենասիրական թեմաներով, անցկացնել զրույցներ նվիրված Հայոց բանակի կազմավորման մասին ,սերմանել սեր առ հայրենք , ծանոթացնել մեր հերոսներին: Ծանոթացնել պետության խորհրդանիշներին:

3.4 - Ֆիզիկական դաստիարակություն

Սերմանել առողջ ապրելակերպ վարելու սկզբունք: Անցկացնել շարժախաղերի, էստաֆետային խաղերի մրցույթներ:

3.5 - Աշխատանքային դաստիարակություն

Դասարանում պահպանել մաքրություն, կարողանալ գնահատել իր և ընկերոջ կատարած աշխատանքը, պահպանել և անհրաժեշտության դեպքում վերանորոգել գույքը: Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը:

3.6 - Բնապահպանական դաստիարակություն

Մաքուր պահել շրջակա միջավայրը: Գարնանը մասնակցել շաբաթօրյակներին և ծառատունկին: Գիտակցի, որ բնության պահպանության պատասխանատուներից մեկն էլ հենց ինքն է:

3.7 - Դպրոց-ընտանիք կապը

Ապահովել դպրոց-ընտանիք կապը: Հանդիպումներ կազմակերպել դասավանդող ուսուցիչների և ծնողների միջև: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել չառաջադիմող աշակերտներին և կապ պահպանել նրանց ծնողների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուս./շ. | Ուս. աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարող |
|---|---|---|---|
| I | ./Զինվել գիտելիքներով/՝ քննարկում:<br>.Կազմակերպչական աշխատանքներ:<br>. Խաչմերուկները և դրանց տեսակները: Ճանապարհային գծանշումներ: | 1.09-8.09 | շրջակայի ու |
| II | .Մշակել դասրանական կանոնակարգը:<br>./ Ինչպե՞ս աշակերտն իրեն պահի դպրոցում/՝ զրույց-քննարկում:<br>./Իմ երկրի պատմական իրադարձությունները/՝ տեսադաս: | 11.09-15.09 | դասղեկ |
| III | .Ստեղծել կանաչ անկյուն:<br>.Անհատական աշխատանք չառաջադիմող աշակերտների հետ:<br>./Անկախության օր/՝ պաստառի պատրաստում; | 18.09-22.09 | դասղեկ |
| IV | .Ուսուցիչը և նրա դերը:<br>.Ծնող-դպրոց կապը՝ քննարկում:<br>. Ճանապարհային երթևեկության կարգավորման ազդանշանները: | 25.09-29.09 | դասղեկ |
| V | .Էրեբունի-Երևանի հիմնադրումը: /Մեր մայրաքաղաքը/՝ տեսադաս:<br>./Մեր ծագումը/:Թեմատիկ անկյուն:<br>. /Շնորհավոր տոնդ, ուսուցիչ/:Թեմատիկ զրույց: | 2.10-6.10 | մայրենի ու |
| VI | .Չառաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքներ:<br>.Խնամել դասարանական բույսերը:<br>. Ճանապարհային նշանները և դրանց խմբերը: | 9.10-13.10 | դասղեկ |
| VII | ./Համբերատարությունը գործի կեսն է/՝ բանավեճ:<br>.Զրույց ուսումնական գործընթացից հետ մնացող աշակերտների ծնողների հետ: | 16.10-20.10 | դասղեկ |
| VIII | ./Լինել հանդուրժող/՝ խաղ-քննարկում:<br>./Աշնանային գունապնակ/՝ թեմատիկ անկյուն: | 30.10-3.11 | դասղեկ |
| IX | . /Դասարանն իմ տունն է/՝ զրույց;<br>.Կազմակերպչական հարցեր:<br>.Դասագրքերի ստուգում, վերանորոգում: | 6.11-10.11 | դասղեկ |
| X | ./Ինչպես վերաբերվել մեծերին/՝զրույց:<br>. Փողոցները և ճանապարհներն անցնելու կանոնները: | 13.11-17.11 | շրջակայի ու |

| | | | |
|---|---|---|---|
| XI | ./Աշխատանքը բարիք է/՝ խմբային աշխատանք: | 20.11-24.11 | մայրենի ու□ |
| XII | ./Ինչպես ապահովել անվտանգ երթևեկություն/:Խաղ-ուսուցում<br>./Ձմեռ/՝թեմատիկ անկյուն: | 27.11-1.12 | շրջակայի ու□ |
| XIII | ./Պատրաստվում ենք ամանորին/՝ քննարկում:<br>../Ինչպես պաշտպանվել երկրաշարժի ժամանակ/՝տեսադաս:<br>.Ձմեռող թռչունների խնամք: | 4.12-8.12 | շրջակայի ու□ |
| XIV | ./Ինչպե՞ս պետք է վարվել կենդանիների հետ/:Նամակագրություն<br>.Կարդացած գրքի քննարկում:<br>. Տրանսպորտային միջոցների արգելակման ճանապարհը: | 11.12-15.12 | մայրենի ու□ |
| XV | ./Պահպանենք մեր մոլորակը/՝պաստառի ստեղծում:<br>./Դիմավորենք Նոր տարին/ ՝դաս-միջոցառում:<br>.1-ին կիսամյակի ամփոփում | 18.12-22.12 | շրջակայի ու□ |
| XVI | ./Բարությունը փրկում է աշխարհը/՝ զրույց:<br>./Ո՞ւմ եմ համարում լավ մարդ/՝զրույց: | 8.01-12.01 | մայրենի ու□ |
| XVII | ./Աշխատասիրությունը՝ հաջողության սկիզբ/՝ զրույց:<br>. Տրանսպորտային միջոցների տեսակները: | 15.01-19.01 | շրջակայի ու□ |
| XVIII | ./Մեր պանծալի հերոսները/՝ճանաչենք նրանց անուն առ անուն:<br>./Հայոց բանակ/ միջոցառում: | 22.01-26.01 | մայրենի ու□ |
| XIX | .Դասարանական կարգականոնի, սանհիգիենիկ հարցերի քննարկում:<br>.Աշխատանք չառաջադիմող աշակերտների հետ: | 29.01-2.02 | դաստեկ |
| XX | ./Անաղարտ պահենք մեր մայրենին/՝ խոսենք գրական: | 5.02-9.02 | մայրենի ու□ |
| XXI | ./Ուս ուսի որ տանք սարեր շուռ կտանք / ՝զրույց:<br>. Սեղանի խաղեր երթևեկության կանոնների վերաբերյալ: | 12.02-16.02 | դաստեկ |
| XXII | ./Գրքի զարմանահրաշ աշխարհը/՝ պաստառի պատրաստում: | 19.02-23.02 | մայրենի ու□ |
| XXIII | .Ստեղծագործում են աշակերտները:<br>. Փողոցներում և ճանապարհներին աշակերտների վարքի կանոնների վերաբերյալ խաղեր և մրցույթներ: | 26.02-1.03 | շրջակայի ու□ |
| XXIV | ./Մայրիկն իմ աշխարհն է…/՝ նկարել մայրիկներին:<br>./Գարուն…/՝թեմատիկ անկյուն: | 4.03-8.03 | դաստեկ |
| XXV | ./Քաղաքավարությունը՝ մարդու կարևոր բնութագիր/՝ զրույց-քննարկում:<br>.Կազմակերպչական հարցեր: | 11.03-15.03 | շրջակայի ու□ |

| | | | |
|---|---|---|---|
| XXVI | ./Հայկական ավանդույթները եկեղեցական տոներում/՝ տեսադաս:<br>.Նշենք Սուրբ Զատիկը: | 18.03-22.03 | դասղեկ |
| XXVII | ./Հումորի սենյակ/ ՝ թեմատիկ անկյուն: | 1.04-5.04 | դասղեկ |
| XXVIII | ./Սիրենք և պահպանենք բնությունը/՝թեմատիկ անկյուն: | 8.04-12.04 | շրջակայի ու□ |
| XXIX | ./Վատ սովորությունների հետևանքները/՝ծնողների հետ զրույց –քննարկում: | 15.04-19.04 | շրջակայի ու□ |
| XXX | ./Հարգենք Եղեռնի զոհերի հիշատակը/՝ տեսադաս:<br>./Պատմական ակնարկ/՝ ներկայացում 3-րդ դասարանի աշակերտներին: | 22.04-26.04 | մայրենի ու□ |
| XXXI | ./Ինչպիսի՞ն պետք է լինի իսկական ընկերը/՝ քննարկում: | 29.04-3.05 | մայրենի ու□ |
| XXXII | ./Հաղթանակի օր: Հաղթանակն ու հայ ժողովուրդը/՝տեսադաս: | 6.05-10.05 | մայրենի ու□ |
| XXXIII | ./Մեր հանրապետությունը/՝ թեմատիկ անկյուն | 13.05-17.05 | մայրենի ու□ |
| XXXIV | ./Աշխարհն իմ աչքերով/՝ ցուցահանդես:<br>.Ուստարվա արդյունքների ամփոփում:<br>./Գնում ենք արձակուրդ/՝ աշխատանքների կազմակերպում: | 20.05-24.05 | դասղեկ |